



*Շրջակա միջավայրի նախարարության
«Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ*

ԱԳՐՈՏԵՐԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ

ՏԵՂԵԿԱԳԻՐ

2024


Մեպտեմբերի առաջին տասնօրյակ

Տեղեկագիրը կազմել է ագրոոդերևութաբանության բաժինը՝ մասնագիտացված ագրոոդերևութաբանական կայաններից ստացված տեղեկատվության հիման վրա:

Տեղեկագրի պատասխանատու՝ տնօրենի տեղակալ Գ. Մուրենյան

ՀԻՄՆԱԿԱՆ ՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սեպտեմբերի առաջին տասնօրյակում օդի միջին ջերմաստիճանը հանրապետությունում եղել է նորմայից բարձր մինչև 1 աստիճանով:




Տասնօրյակի ամենաբարձր ջերմաստիճանները դիտվել են սեպտեմբերի 3-ին. Տավուշում գրանցվել է +31...+34°C (Դիլիջան՝ +28°C), Վայոց ձորի լեռնային շրջաններում՝ +32...+34°C, նախալեռնային շրջաններում՝ +35...+37°C, Սյունիքի հովտային շրջաններում՝ +32...+35°C, նախալեռնային շրջաններում՝ +26...+28°C, Շիրակում՝ +30...+33°C (Աշոցք՝ +27°C), Կոտայքի լեռնային շրջաններում՝ +28...+32°C, նախալեռնային շրջաններում՝ +32...+34°C, Գեղարքունիքում՝ +25...+30°C (Մասրիկ՝ +32°C), Լոռիում՝ +25...+29°C, Արմավիրում, Արարատում՝ +36...+38°C, Արագածոտնի լեռնային շրջաններում՝ +27...+29°C, նախալեռներում՝ +31...+36°C:

Տասնօրյակի ամենացածր ջերմաստիճանները դիտվել են սեպտեմբերի 7-ին. Տավուշում գրանցվել է +13...+15°C, (Դիլիջան՝ +9°C), Վայոց ձորի լեռնային շրջաններում՝ +6...+8°C, նախալեռնային շրջաններում՝ +13...+15°C, Սյունիքի հովտային շրջաններում՝ +12...+17°C, նախալեռնային շրջաններում՝ +6...+9°C, Շիրակում՝ +5...+9°C, Կոտայքի լեռնային շրջաններում՝ +6...+9°C, նախալեռնային շրջաններում՝ +12...+14°C, Գեղարքունիքում՝ +7...+10°C, Լոռիում՝ +9...+11°C (Տաշիր՝ +5°C), Արմավիրում, Արարատում՝ +14...+16°C, Արագածոտնի լեռնային շրջաններում՝ +6...+8°C, նախալեռներում՝ +12...+15°C:



Տասնօրյակային տեղումների գումարային քանակը շիրակում կազմել է 11-44մմ (133-321%), Լոռիում՝ 7-16մմ (48-144%), Տավուշում՝ 7-17մմ (50-129%), Արագածոտնի լեռնային շրջաններում՝ 21-33մմ (196-308%), նախալեռներում՝ 2-8մմ (57-148%), Գեղարքունիքում՝ 2-10մմ (10-72%), Կոտայքի լեռնային շրջաններում՝ 10-22մմ (139-169%), նախալեռնային շրջաններում՝ 5մմ (135%), Արմավիրում՝ 3-5մմ (130-250%), Արարատում՝ 1-2մմ (43-63%), Վայոց ձորի լեռնային շրջաններում՝ 4մմ (53%), նախալեռնային շրջաններում՝ 3մմ (75%), Սյունիքում փասնօրյակի ընթացքում տեղումներ չեն դիտվել:



Հողի մակերևույթի նվազագույն ջերմաստիճանները գրանցվել են լեռնային շրջաններում՝ +2...+7°C, Արարատյան դաշտում, Արագածոտնի նախալեռներում, Տավուշի և Սյունիքի հովտային շրջաններում՝ +11...+14°C:

Վեգետացիոն ինդեքսի ընթացիկ ընթացքն անցյալ տարվա և բազմամյա միջինի համեմատ

Գյուղատնտեսական մշակաբույսերի աճն ու զարգացումը

Տասնօրյակի ընթացքում հանրապետությունում շարունակվել են գյուղատնտեսական աշխատանքները:

Հովտային շրջաններում կատարվել են բանջարանոցային մշակաբույսերի, խաղողի, սերկևիլի, նռան, ընկույզի, լեռնային շրջաններում՝ հնդավորների, կարտոֆիլի, կաղամբի բերքահավաք:

Լեռնային և նախալեռնային շրջաններում շարունակվել են աշնանացան ցորենի ցանքի և նախացանքի աշխատանքները:

Տասնօրյակի ընթացքում դիտված տեղումները բարձրացրել են հողի խոնավության պաշարները՝ բարելավելով նախացանքի, ցանքի, հատիկի աճի և զարգացման պայմանները:

